էին զօրպայք, նոցա կապայ ագուցեալ և խիլայեաց։ Եւ ի պահու երեկոյիս բերին զՀասան աղան, զոր էր ի պահեստի առ վէզիրն, և թագաւորն պատուիրեալ էր ի ժամուն յայնմիկ զոր եմուտ առ նա ի ծածուկ, եթէ Որքան խնդրեցին ծառայքն ի ներքուստ՝ ետու նոցա, այժմ ետու հրաման ի ձեռս քո, զի որքան գրեալ անուն կայ ի տէֆտէրն՝ գտեալ սպանցես։ Եւ յայնմ ժամու վէզիրն ևս բան եդեալ ընդ թագաւորին թէ Գամ առ քեզ և թախլիս անեմ զՀասան աղան, հրամայեա՛ թէ սպանցի։ Եւ ի պահուս եմուտ առ թագաւորն որպէս զի թախլիս արասցէ թագաւորին թէ Սպանանեմ. և նա որպէս ուսեալ էր յառաջագոյն՝ հրամայեաց թէ Սպանցի. ինքն իբր թէ չիք ի մեղս կերպարանեցաւ այնմ բանի. չարկամ էր Նորա, բայց զայս առ երես արար, զի յորժամ առաջին վէզիրութենէն որ մանզուլ արին, նա՛ Հասան աղան բազում պաշարս եդ առ նա և բազում ծախս և պատիւս արար նմա, և յետ գնալոյն զծախս տանն վէզիրին տեսանէր բազում անգամ և սիրեցեալ եղև յաչս սուլթանի Նորին և յոյս ունէր եթէ փրկի վտանգէն. վասն այսորիկ և վէզիրն զայս բան առ թագաւորն ձգեալ և ինքն չիք ի մեղս եղեալ։ Եւ ետուն ի ձեռս դահճացն զնա և նա խեղդամահ արարեալ, տարեալ արկին ի տես ռամկին յընթացս ասպարիսին, զոր եկեալ բարձին առաւօտուս Ուրբաթի (7 Մարտ) ընկերք նորին և բարեկամք և տարեալ եդին ի սահմանս տանն Նորա, զոր անդ չինեալ էր դպրանոց Տաճկաց տղայի և աղբիւր բերեալ և գերեզմանատուն չինեալ իւրն։

Եւ ի սոյն օր մի տաճկի տղայ զՏօնաւագի որդին խաբեալ և ընկեր առեալ իւր և մտեալ ի Պէզաստանն և գողացեալ մի սնտուկ գանձիւք և ելեալ ի Պէզաստանէն թէ երթան։ Տէր Նորա գիտացեալ, զոր էլ ընդդէմ նոցա բարձեալ զսնտուկն, եւ տաճիկն փա-